ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 մայիսի 2026 թ. **N 175-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՎԱՐԴԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԻ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Վարդան Անդրանիկի Մալխասյանի 2026 թվականի մայիսի 12-ին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:

Պատգամավորի թեկնածուի կողմից ինքնաբացարկի մասին դիմում ներկայացվելու դեպքում թեկնածուն հանվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակից:»:

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Վարդան Անդրանիկի Մալխասյանի 2026 թվականի մայիսի 12-ի ինքնաբացարկի մասին դիմումը նոտարական կարգով վավերացված չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.05.2026թ. նիստի մասին Վարդան Անդրանիկի Մալխասյանի պատշաճ իրազեկվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.05.2026թ. նիստին Վարդան Անդրանիկի Մալխասյանի չի ներկայացել:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության ընտրական ցուցակում (10-րդ հերթական համար) ընդգրկված պատգամավորի թեկնածու Վարդան Անդրանիկի Մալխասյանի ինքնաբացարկի մասին դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մայիսի 14
ք. Երևան